

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ. Միքայել Միանսարյանց (1830–1880). կյանքն ու գործը. Երևան, «Մուղնի» հրատ., 2002, 106 էջ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ վերջերս լույս է ընծայվել բանասիրական գիտությունների թեկնածու Սվետլանա Վարդանյանի «Միքայել Միանսարյանց (1830–1880). կյանքն ու գործը» մենագրական ուսումնասիրությունը (խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անգամ Ս. Հարությունյան):

Հայ բանագիտության սլատմությունը ժամանակագրական ամբողջ շղթայի տարբեր օղակների վերհանումն ու զնահատումը ներկայիս առաջնահերթ խնդիրներից է: Այդ նպատակով անհրաժեշտ է նախնական հետազոտական պրպտումներ կատարել ըստ առանձին բանագետ-բանահավաքների, որոնք իրենց երախտաշատ գործունեությամբ նպաստել են Հայ բանագիտության պատմության ձևավորմանն ու զարգացմանը: Առ այսօր կատարված էին Ա. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» (1970), Վ. Սվազլյանի «Սարգիս Հայկունի» (1973) և Ս. Վարդանյանի «Տիգրան Նավասարդյան» (1991) մենագրական ուսումնասիրությունները: Միքայել Միանսարյանցի մասին սույն աշխատությունը դալիս է համալրելու վերոհիշյալ հետազոտությունների շարքը: Առաջին անգամ դիտական բաղմակողմանի վերլուծությամբ, ըստ արժանվույն զնահատվում է XIX դ. 50–60-ական թվականների Հայ հասարակական-մշակութային առաջավոր գործիչ Մ. Միանսարյանցի կյանքն ու նրա մշակութային ժառանգությունը:

Ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա նաև Մոսկվայի Լադարյան ճեմարանը՝ Մ. Միանսարյանցն իր ուսումը շարունակել է Ս. Պետերբուրգի Կայսերական

համալսարանի իրավաբանական ֆակուլտետում ստացել թեկնածուի կոչում. իսկ Հեծելազորային ուսումնարանում սպայի աստիճան: Հինելով առաջավոր մտքի տեր անհատականություն՝ նա իր ողջ նպատակաուղղված ջանքերով նպաստել է հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային վերելքին:

Սկզբնական շրջանում Մ. Միանսարյանցը ձեռնամուխ է եղել Եվրոպայի առաջադեմ երկրներում ազգային խնդիրներին առնչվող գրքերի հայերեն թարգմանությանն ու հրատարակությանը: Ըստ նրա ծրագրի՝ եվրոպական կյանք ու կենցաղի, ազգային, կրթական գործունեության մասին հրատարակված գրքերի հայերեն թարգմանություններով, հնարավոր է նպաստել Հայ ազգային մշակութի զարգացմանը, օգնել հասարակության ամենալայն զանգվածներին «եվրոպաբար» մտածել և հաղորդակցվել ազգային արժեքներին, քանի որ հայ ժողովրդին անհրաժեշտ է քաղաքակիրթ ասլրելակերպի իմացություն կյանքի բոլոր բնագավառներում:

Ս. Վարդանյանն իր ուսումնասիրության մեջ հանգամանորեն քննության է առնում Մ. Միանսարյանցի ազգային, մշակութային, լուսավորական գաղափարները, որոնք ամփոփված են նրա «Մտածութիւնք ազգային լուսաւորութեան մասին» հրապարակախոսական հոդվածում: Այդ հոդվածում նա մի ծրագիր-հարցարան է ներկայացնում, որը հայ ժողովրդի կյանք ու կենցաղի բազմաբնույթ կողմերի մտավոր, մշակութային, բարոյահոգեբանական առանձնահատկությունների համալիր հետազոտության փորձ է: Հարցերի պատասխանները, ըստ Մ. Միանսարյանցի, հնարավորություն կընձեռեն հետազոտողներին ազ-

գային վերածննդի, լուսավորության, քաղաքակրթության, Հայ ժողովրդի համախումբ կեցության առաջնահերթ խնդիրները քննել ու վերլուծել մշակութաբանական առավել լայն տեսադաշտի վրա: Այդ խնդիրներն իրագործելու նպատակով Մ. Միանսարյանցն իր շուրջն է համախմբել որոշակի մասնագիտական կադմ ունեցող մտավորականների (հոգեբանականներ, մշակութային գործիչներ, լրագրողներ):

Ունենալով հրատարակչական բավականաչափ դիտլիքներ՝ Մ. Միանսարյանցը 1860–1870-ական թվականներին ձեռնամուխ է լինում հրատարակչական բարձր ու պատասխանատու գործին: Նա իր լուսավորական Հայացքներն ամփոփել է «Ծրագիր կանոնավոր և վայելուչ գրության պատմություն ու տեսություն» ծրագրային գրքում, որտեղ արծարծված են բազմաթիվ խնդիրներ՝ կապված Հայ տպագրության պատմության, տպարանային դործի անհրաժեշտության հետ: Նա ժողովրդի հոգևոր և բարոյական ուժի ակունքը համարում է գիրքը: Եվ այդ հիմք ընդունելով՝ ուսուցիչներին ծանոթացնում է ոչ միայն «կանոնավոր ու վայելուչ գրության» ուսուցման ձևերին, այլև նրանցից պահանջում է կանոնավոր ու վայելուչ պահվածք կյանքի բոլոր բնագավառներում: Հայերենի գրության ձևերին, գեղարվեստական տառաձևերին ծանոթանալու նպատակով նա ուսումնասիրում է զանազան ձեռագիր մատյաններ, կոնդակներ: Նույնիսկ մեկնում է Վիեննա՝ Մխիթարյան միաբանության Հայրերի օրինակելի տպարանային աշխատանքներին ծանոթանալու: Նրանց տառատեսակների ձևաված նմուշները Մ. Միանսարյանցը բերում է Ս. Պետերբուրգ և սկսում իր տպարանային գործունեությունը:

Ազգային արժեքների վերհանման, Հայ ժողովրդի տարբեր հատվածներին այն ճանաչելի դարձնելու նպատակով Մ. Միանսարյանցը ձեռնամուխ է լինում Հայ ազգային երգերի հրատարակմանը: Ս. Վարդան-

յանն ուսումնասիրության «Մ. Միանսարյանցը և Հայ բանագիտության սկզբնավորումը» գլխում քննախույզ վերլուծության է ենթարկում նրա «Քնար Հայկական» (1868) ժողովածուն: Նշում է, որ մի քայլ առաջ անցնելով նախորդների (Ղ. Հ. Ալիշանի «Թամկական երգք Հայոց», Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարան») ժողովածուներին, Մ. Միանսարյանցն իր ժողովածուին հաղորդել է աղբյուրագիտական, մասնավորապես բանահյուսական ու բանագիտական ուղղվածություն: Այդ են վկայում Ստեփանոս Պալասանյանի «Երգեր» և Գարեգին Զարբհանյանի «Գողթան երգեր» հետազոտությունների զետեղումը ժողովածուի սկզբում իբրև առաջաբաններ:

«Քնար Հայկական» ժողովածուի ուղենշային առաջաբանում Մ. Միանսարյանցը շարադրել է իր գործունեության ծրագիրն ու նպատակները, բացահայտել Հայկական հոգևոր և աշխարհիկ երգերի դաստիարակչական, կրթամշակութային հզոր նշանակությունը: Նա համոզված է եղել, որ աշխարհի տարբեր երկրներում ցրված Հայերը, ծանոթանալով ազգային երգերին, կարող են համախմբվել մեկ միասնական դադափարի շուրջ՝ ձևավորելով ազգային համընդհանուր մտածողություն:

Մ. Միանսարյանցն իր «Քնար Հայկական» ժողովածուի նյութերը մատուցել է դիտական որոշակի սկզբունքներով, որոնք իրենց նախատիպը գրեթե չեն ունեցել: Քնարական ստեղծագործությունների մասին ձեռք բերած տեսական գիտելիքներն ու իմացությունը նպատակամղում են նրան բնագրերը տեղաբաշխելիս առաջնորդվել ժանրային ու թեմատիկ սկզբունքներով՝ ելակետ ընդունելով Հայկական երգերի բազմաբովանդակ հատկանիշները՝ 1. հոգևոր երգեր, 2. օրորոցային երգեր, 3. հասարակաց (ոսմական) երգեր, 4. ազգային, ազգասիրական և զինվորական երգեր, 5. ուսանողաց երգեր, 6. սիրո երգեր, 7. տխուր երգեր, 8. խնջույքի, ուրախության, հարսանյաց և երգիծական երգեր, 9. խառը բա-

նաստեղծություններ, ինչպես նաև առանձին բաժնով ներկայացրել է «Ազգային կամ Հայախոս առածներ»:

Ա. Միանսարյանցի կիրառած նորարարական սկզբունքները Ս. Վարդանյանին Հիմք են տվել եզրակացնելու, որ «Քնար Հայկական» ժողովածուն իր բնագրագիտական որոշակի սկզբունքներով առաջին լուրջ փորձերից մեկն է, որի ուղենշած գիտագործնական բազմաթիվ դրույթները նպաստել են XIX դ. երկրորդ կեսին նոր սկզբնավորվող Հայ բանագիտության ձևավորմանն ու հետագա զարգացմանը:

Ս. Վարդանյանն իր ուսումնասիրության մեջ Համադրական աղյուսակներով Հանգամանորեն վերլուծել է Մ. Միանսարյանցի ներկայացրած բնագրերի դասակարգման և մատուցման սկզբունքները:

Գրքի վերջում առանձին բաժնով տրված են Մ. Միանսարյանցի մի քանի նամակներն ու նրա ձեռագրի պատճենը: Այն օժտված է նաև ուսերեն և անգլերեն ամփոփումներով:

Մեր անցյալի մշակութային գործիչների երախտաշատ վաստակն ըստ արժանվույն գնահատելու ասպարեզում որոշակի ձեռքբերումներ ունեցող Ս. Վարդանյանի սույն աշխատությունն արժեքավոր ներդրում է Հայ բանագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում:

Ասենք նաև, որ «Մուղնի» հրատարակչության տպագրած այս ներկայանալի գիրքը լույս է տեսել Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աղլյանի եռանդուն ջանքերով՝ ինժեք Սարգսյանի և էդուարդ Մսրյանի հովանավորությամբ:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ